ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 03.06/284
03.06.2015 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Գևորգ Կոստանյանին
Պատճենը՝ ՀՀ Քննչական կոմիտեի նախագահ
Աղվան Հովսեփյանին

Հարգելի պարոն Կոստանյան,

Վերջին օրերին լրատվական միջոցներով տարածվել են նյութեր, որոնցում ներկայացվում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ՀՀԿ խմբակցության անդամ՝ Առաքել Մովսիսյանի հայտարարությունները բռնաբարելու և գլխատելու վերաբերյալ: ՀՀ ԱԺ պատգամավոր Ա. Մովսիսյանը լրատվական միջոցներին տված հարցազրույցներում բացահայտ սպառնալիքներ է տալիս ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ընտանիքի հասցեին տեղեկատվություններ տարածած, կարծիքներ հայտնած անձանց հասցեին, մասնավորապես նշելով. « Էտ սրիկաները էդքան մեղք չունեն, ինչքան իրանց պապաները, իրանց պապաներին պետք ա անպայման ճարվի և գլխատվի, որովհետև դրանց ընտանիքները երևակայի տուն, տեղ ընտանիք հասկացողություն չունեն նման ընտանիքի վարկաբեկելու համար և ազգային հերոսի նման կարգավիճակի հասցնելու համար, ես չեմ պատկերացնում, Աստված տա, իմ ձեռքը որ ընկնի, ես անձամբ կգլխատեմ...» այնուհետև նշում է. «...Կոչ եմ անում վեր ընկնեն իրանց տեղը, Աստված մի արասցե, որ բռնեցինք, իրանք հաստատ բռնաբարվելու են[1]»:

Այսինքն ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Առաքել Մովսիսյանը հրապարակայնորեն գլխատելու և բռնաբարելու սպառնալիքներ է տալիս, դեռ ավելին կոչ է անում գլխատել և բռնաբարել:

---

1 http://fnews.am/?p=2507525&l=am%2Fbacarik+tesanyutastvac+mi+arascevor+brnecinqhastat+irenq+brnabarvelu+en+araqel+movsisyany+pashtpanutyan+naxarari+yntaniqi+dem+irakancvox+arshavi+masin+

Գտնում եմ, որ ՀՀ ԱԺ պատգամավոր Ա. Մովսիսյանի կողմից արված կոչերը իրենց մեջ պարունակում են հանցագործության հատկանիշներ:

Ելնելով վերը նշվածից և այն հանգամանքից, որ 2015թ. ապրիլի ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում հարուցվել էր քրեական գործ Հիմնադիր Խորհրդարանի անդամների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի հատկանիշներով, այն հիմքով, որ վերջիններս մտադրվել են զանգվածային անկարգություններ հրահրել և որը դիտվել է հանցագործության նախապատրաստություն, սույն դեպքում սպառնալիքը հնչեցվում է իշխանություն ունեցող անձի, ՀՀ ԱԺ պատագամավորի կողմից է և առավել քան իրական է, դիմում եմ Ձեզ ՀՀ ԱԺ պատգամավոր Առաքել Մովսիսյանի նկատմամբ հարուցել քրեական գործ, վերջինիս կողմից կատարված կոչերի և սպառնալիքների հիման վրա:

Կից ներկայացնում եմ Ա. Մովսիսյանի հարցազրույցը էլեկտրոնային կրիչով:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Չատինյան
achatinyan@hcav.am
հեռ.՝ 094042268